

### ՀԱՆԳԻՍ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ  
ԿԱԹՈԼԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐք Տ. Տ. ԴԱՎԻԹ Ե-Ի  
(1903—1977)

Ս/թ. նոյեմբերի 9-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում ի Տեղ հանգավ Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս և Մցխեթի մատրոպոլիտ Տ. Տ. Դավիթ Ե-Ի:

Այս տիտուր առիթով կաթողիկոսական տեղապահ, Սովորման և Աքիազիայի առաջնորդ տ. Ելիա միտրոպոլիտը Հայոց Հայրապետին էր ուղարկել հետևյալ բովանդակությամբ հեռագիրը.

«Խորին վշտով հայունում եմ Ձերդ Սրբությանը, որ ս/թ. նոյեմբերի 9-ին ի Տեղ հանգավ Համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Դավիթ Ե-Ի: Ժաման արարողությունը կկատարվի նոյեմբերի 15-ին, երեքշաբթի, Թբիլիսիի պատրիարքարան Մայր տաճարում»:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ և Նրա անոնից, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքափակուսու Տեղ-Ստեփանյանը նույն է պատասխան ցավակցական հեռագիր, որի մեջ նշվել էր նաև, որ Հայոց Հայրապետը իր անձնական մասնակցությունն է թերեկու քաղաքան արարողությանը՝ բաժանելու համար վրաց բոյլ եկեղեցու կրած մեծ վիշտը:

Նոյեմբերի 14-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ տ. Կոմիտաս արքափակուսու և Մայր Աթոռի միաբան

տ. Անանիա վրդ. Արարացյանի, ավտոմեքենայով մեկնում է Թբիլիսի՝ մասնակցելու Տ. Դավիթ Ե-Ի կաթողիկոսի թաղման արարողությանը:

Թբիլիսիից մոտ 20 կմ մետավորության վրա Հայոց Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին, հանուն վրաց եկեղեցու, դիմավորում են Մագիստի արքափակուսու Գեղրգին, Բողրիսի եպիսկոպոս Դարինը, Նիկոլայ Վարդապետը ու Վրաստանու պրավուլայ եկեղեցու առաջնորդ Զինովիէ արքափակուսուրը:


Այսուհետև մերենամերի շարապանը ուղևորվում է դեպի մայրաքաղաքի վրաց ս. Սիոն Մայր եկեղեցի:

Ս. Սիոն Մայր տաճարում տեղի նոգեռուական դասը Սովորմանի և Աքիազիայի առաջնորդ տ. Ելիա միտրոպոլիտի գլխավորությամբ եկեղեցական թափորով դիմավորում է Հայոց Հայրապետին:

Տաճարի կենտրոնում դրված է Տ. Դավիթ կաթողիկոսի դագաղը:

Հայոց Հայրապետը և Նրա շքախմբի անդամները ներթուվ մոտենում են հանգույցալ կաթողիկոսի դագաղին, մի քանի վայրկյան լուսությամբ հարգում երա հիշատակը և ապա ստացնորդվում ու. խորան:

Կաթողիկոսական տեղապահ տ. Ելիա միտրոպոլիտը, ուղունելով Հայոց Հայրա-



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԴԱՎԻԹ Ե ՊԱՏՐՈՒՄՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ  
(1976, ՄԵՊՏ. 27)

պետի ներկայությունը, միաժամանակ, հանուն վրաց եկեղեցու, իր սրտի խորը շնորհակալությունն է հայտնում Հայոց Հայրապետի՝ իրենց համար այս ծանր պահին ներկա լինելու առիթով։

S. Դիլա միտրոպոլիտի բարիգալստյան խոսքից հետո խոսք է առնում Վեհափառ Հայրապետը։

«Սրտի անհուն ցավով գալիս ենք Հայատանից՝ Մեր վերջին հրաժեշտը տալու սիրեցյալ եղբայր S. Դավիթ Ե կաթողիկոսին և ձեզ հետ միասին աղոթելու նրա հոգու խաղաղության համար»։

Այսուհետև նորին Սրբությունը ներկայացնում է Դավիթ Ե կաթողիկոսին, որպես հայ եկեղեցու և իր անձնական բարեկամի, վրաց օրթոդոքս եկեղեցու պայծառության նվիրված ազնիվ Հովկապետի, որի հիշատակը անմոռաց է մնալու։

Ս. Սիրն տաճարից հայ, վրացի և ոուս հոգկորականներից կազմված թափորը Հայոց Հայրապետի գլխավորությամբ առաջնորդվում է հայոց ս. Գևորգ եկեղեցի, որը նրանց դիմավորում է եկեղեցու քահանայից դար և հայ հավատացյալ ժողովորի խումբը՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ Կայսիկոպոս Սերայդարյանի գլխավորությամբ։

Թափորը «Հրաշափառ»-ով մուտք է գործում ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցի, որ Վեհափառ Հայրապետը, հաղորդելով իր ողջումներն ու օրինությունները հավատացյալ ժողովորին, խոսում է այն մեծ կորըստի մասին, որ կրել է վրաց օրթոդոքս եկեղեցին և վրաց հավատացյալ ժողովորությունը։ Վեհափառ Հայրապետը թելադրում է հայ հավատացյալներին՝ աղոթել S. Դավիթ Ե կաթողիկոսի հոգու խաղաղության և փրկության համար։

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ նվիրված հանգուցյալ S. Դավիթ Ե կաթողիկոսի հիշատակին։

Հաջորդ օրը, նոյեմբերի 15-ին, երեքշարթի, վրաց ս. Սիրն Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր ս. պատարագ։ Օրվա պատարագին է կաթողիկոսական տեղապահ տ. Դիլա միտրոպոլիտը։ Սուրբ պատարագին ներկա էին այս տիտոր առիթով Թրիլիսի ժամանած քույր եկեղեցիների ներկայացուցչները։ ոուս պրավոլավ եկեղեցոց՝ Տալիհին և Էստոնիայի միտրոպոլիտը Ալեքսին և Զարայսկի եպիսկոպոս Խովը, հովու օրթոդոքս եկեղեցոց՝ Թրակիայի և Բաւարիի միտրոպոլիտը Անտոնիոս Բանֆիսը, Տիմոթեոս և Անտիոքի վարդապետների ընկերակցությամբ։

Հոունեական կաթողիկ եկեղեցին՝ «Քրիս-

տոնեական միություն» քարտուղարության անունից ներկայացնում էր հայր Նիկոլայոս Վիկոլը։

Պատարագի վերջում սկսվում է թաղման արարողությունը։

Սուաշին Ավետարանի ընթերցումից հետո խոսք է առնում կաթողիկոսական տեղապահ միտրոպոլիտ Դիլան, որը ներկային համառոտ կերպով ծանոթացնում է հանգուցյալ S. S. Դավիթ Ե կաթողիկոսի կյանքին և գործունեությանը։

Այնուհետև խոսքը տրվում է Հայոց Հայրապետ Նորին Սրբություն S. S. Վազգեն Ս. կաթողիկոսին։

«Այսօր ծանր սույն մեջ է Վրաստանի մեր քույր եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը։ Վահաճանակել է Նորին Սրբություն Դավիթ Ե կաթողիկոս-Պատրիարքը, բարի Հովկապետը վրաց ժողովուրդին։

Սույն մեջ է նաև մեր եկեղեցին՝ Հայատանայաց առաքելական եկեղեցին։ Եվ մենք եկեղեցին տիտոր սրտով Հայատանայաց, սույր Էջմիածնից, իբրև սգավոր եղբայրներ՝ ձեզ հետ միասին աղոթելու ի Տեր հանգուցյալ ձեր սիրեցյալ Հայրապետի հոգու խաղաղության և լուսավորության համար։

Ամեն անգամ, երբ վրացական մեր քույր եկեղեցին որախության օրեր է ապրում, մենք նույնական որախանում ենք և հրճում։ Խև տիրության պահերին եղբայրորեն բաժանում ենք նրա վիշտը ինչպես այսօր։ Եվ այլ կերպ չի կարող լինել, որովհետև մենք երկու ժողովուրդներ ենք, որոնք քրիստոնեության արշալույսին իսկ գրեթե միաժամանակ արթնացել են և աշքերը բացել Քրիստոսի լուսին։

Դարեւ շարունակ մեր ժողովուրդները միատեղ են ստեղծել ու զարգացրել քրիստոնեական քաղաքակրթություն՝ ամեն մեկը պահպանելով իր ազգային ստեղծագործ ինքնուրույնությունը։

Եվ Արևելքի այս սահմանների վրա նըրանք հաճախ միասին են պաշտպանել իրենց քրիստոնեական հավատքը և իրենց ազգային ազատությունը՝ երբեմն իրենց մարմնի հահատակրթյան իսկ գնով։

Այս դարավոր եղբայրությունը այն պատմական հիմքն է, որի վրա Կանգնած ենք մենք այսօր իբրև որացի ժողովուրդներ և իբրև քույր եկեղեցիներ սովորական ժողովուրդների մեծ ընտանիքում։

Հանգուցյալ Դավիթ Ե կաթողիկոսին Մենք հարգում էինք և սիրում իբրև Հովկապետը համայն Վրաստանի և իբրև անկեղծ բարեկամը հայ եկեղեցու և անձամբ Մեր։

Նրա ամբողջ կանքը եղել էր ծառադորյուն և նվիրուս իր ժողովրդին ու իր եկեղեցուն: Նա ազնիվ հոգու տեր բարի մարդ էր՝ Եկումենիկ սիրով տողորփած դեռի բոլոր եկեղեցիները և բոլոր մարդիկ: Նրա սիրած մարդու էր և բարի՝ սպասակ աղավնու նման:

Թող Տերը քաղցրությամբ ընդունի նրա արդար հոգին երկնային արքայության մեջ:

Սիրելի ժողովորդ, մենք բոլորս քիսունշաներ ենք և հավատում ենք հավիտենական կանքին: Հույսը հոգու անմահության գերազուն մխիթարությունն է համայն մարդկության: Այդ փրկարար հույսով բոլորս աղոթենք ի Տեր հանգուցալ Դավիթ և Հայրապետի հոգվուն համար, մի հոգեվոր անձնավորություն, որը Պողոս առաքյալի հման «հավատքը պահպանեց, իր կանքի ընթացքը կատարեց և այժմ սպասում է երկնային փառաց պատկին»:

Բարի Աստծուց հացում ենք հոգին մխիթարություն վրաց եկեղեցու սուրբ Սինոդի անդամներին, հավատացալ ժողովրդին և սպակիր ընտանիքի անդամներին:

Աստուծու ողորմությամբ մաղթում ենք նաև վրացական մեր բոլոր եկեղեցուն հետագա ծաղկում և աստվածահան նոր իրագործումներ այժմ և միշտ և հավիտան հավիտենից, ամեն:

Վեհափառ Հայրապետի խոսքից նեսոն լնիքերցվում է երկրորդ Ավետարանը: Ասք խոսք է տառում Տալինի և Էստոնիայի միտրոպոլիտ Ավերսին հանուն ուս պրավուլավ եկեղեցու և նրա Պատրիարք Նորին Սրբություն Տ. Տ. Պիմենի, արտահայտելու համար իր ցավակցությունները Տ. Տ. Պավիլ և կաթողիկոսի մահվան ատիքով:

Եվ այսպես, լուրաքանչյուր Ավետարասին ընթերցումից նեսոն ցավակցական խոսրով հանդես են գալիս հոյն օրթոդոքս և կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները:

Թաղման արքարությունից հետո դագաղը դորս է բերվում եկեղեցու շրջափակ, որ երեք անգամ ու Սինոն տաճարի շորջ պրտղովելոց հետո բերվում է ներս՝ տաճար, որի հյուսիսային պատի մոտ էլ ամփոփիվում է այժմ արդեն պատմության գիրկն անցած Համայն Վրաստանի կաթողիկոս Տ. Տ. Պավիլ և ի մարմինը:

Թաղման այս արքարությամբ ներկա է լինում վրացի, նայ և ուս հավատացյալ ժողովրդի հոն քաջություն:

Նոյն օրը, երեկոյան, «Ծվերիա» հյուրանոցում վրաց եկեղեցու կողմից հանգուցյալ կարողիկոսի նիշատակին տրվում է հոգեման:

«Ֆիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»:

Նոյեմբերի 16-ին, շորերշաբի օրը, Վեհափառ Հայրապետը և Նր շքախումբը վերադառնում է ս. Էջմիածին:

Նոյեմբերի 20-ին, կիրակի օրը, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեմանգրանցույան հանիչիսավոր արքարություն՝ հանգուցյալ Տ. Տ. Պավիլ և վրաց կաթողիկոսի հոգու խաղաղության և լուսավորության համար: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը հնարկաց մեռագիրն է ուղղում կաթողիկոսական տեղապահ, Սույնութի և Արքակի պատաժնորդ տ. Եղիա միտրոպոլիտին:

Կիրակի 20 նոյեմբերին ս. Էջմիածին Մայր տաճարում ի ներկարության նախատացալավետոր հոն քաջության տեղի ունեցավ հանիչիսավոր ու պատարագ և հոգեմանգրանցույան արքարություն հանգուցյալ Պավիլ և Պատրիարք-կաթողիկոսի հոգու խաղաղության և լուսավորության համար: Մեզ համար հոգեկան մխիթարությունն եղավ այս տիտոր առթիվ ներկա ժողովություն խուել ի Տեր հանգուցալ Դավիթ Հայրապետի անձնավորության և կանքի մասին ու մի անգամ ևս աղոթել նրա բարի հոգու համար:


Մաղթում ենք Զեզ, ձեր ս. Սինոդի անդամներին և համայն Վրաստանի ժողովրդին սուրբ Հոգու մխիթարությունն և հետագա ծաղկում պրտղովելու պատմական պատմական ողպափառ եկեղեցու:

#### Վ Ա Զ Գ Ե Ն Ա ԿԱԹՈՌԼԻԿՈՍ ԱՄԵԽԱՅՆ ՀԱՅՈՑ

21 նոյեմբեր 1977 թ.

Նորին Սրբություն Տ. Տ. Պավիլ և Պատրիարք-կաթողիկոսը (ավագանի անունով՝ Խարիտոն) ծնվել է 1903 թ. մարտի 24-ին (նիւթ տոմարով) Խարագոռովիի շրջանի Միլոցմինդա գյուղում: 1917 թ. սովորել է

ՀԱՅՈՑ ՀԱՅՈՒԹԵԾՆ, Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՎ. Տ. ԳԵՂԱՐԳ. ՄՐԱՎՋԱՆՆԵՐԸ  
ՀԱՆԳՈՒԹՅԱՆ, Տ. ԴԱՎԻԹ Ե ՊԱՏԻՒՄԱԳ-ՎԱԹՈՒՄԱԿՍԻ ԴԱԳԱԼԻ ՄՈՏ



Սարգվելիի միջնակարգ ուսումնարանում:  
Սաստօն հանդեպ ունեցած սերը և եկեղեցուն ծառայելու ձգտումը ստիպում են հրանի իր ուսումը շարունակելու Զբուարութիրի վաճրում: 1918 թ. Քութահսիի միտրոպոլիտից ստանում է դպիրի աստիճան՝ ծառայելու համար Միտրոպոլիտայի եկեղեցում: 1927 թ. ձեռնադրվում է քահանա: 1930 թ. տեղափոխվում է ծառայելու Թքիլիսի և Սիրո եկեղեցում: 1956 թ. Մելքիսեդեկ կայողիկոսի կողմից տ. Խարիտոն քահանան ձեռնադրվում է եպիսկոպոս՝ Դավիթ անունով: 1959 թ. Եղանակվում է Մանզլիսիի թեմի առաջնորդ: 1962 թ. նա Եփրեմ կայողիկոսի կողմից ստանում է միտրոպոլիտի տիտղոս: 1972 թ., Եփրեմ կաթողիկոսի մահից հետո, ընտրվում է Համայն Վրաստանի կայողիկոս-Պատրիարք:

Հանգուցյալ երջանկահիշատակ կաթողիկոսի օրով վրաց քուր եկեղեցին ուսու պրավուալ և հայ առաքելական եկեղեցիների թետ միասին ակտիվորեն մասնակցել է խաղաղության պահպանմանը և ամրապնդմանը Ալիրված աշխատանքներին և միջազգային ժողովներին, ինչպես նաև եկեղեցիների միության ի նպաստ կատարված էկումենիկ շարժումներին:

Գոհունակությամբ պետք է արձանագրել, որ հանգուցյալ Տ. Տավիթ Ե կաթողիկոսի օրով է՝ լ ավելի սերտացան հայ և վրաց քուր եկեղեցիների հարաբերություններն ու երկու ժողովուրդների բարեկամությունը:

ԱՆԱՆԻԱ ՎՐԴ. ԱՐԱԲԱՋՅԱՆ

